# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 038

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15 ԱՊՐԻԼԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 5 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 16-ը ապրիլի 2021 թվականի թիվ 5 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 16.04.2021 թվականի թիվ 5 նիստի օրակարգը հաստատելու մասին

2. Արենի ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում Սերյոժա Նելսոնի Սիմոնյանի թեկնածությունը հաստատելու մասին

3. Արենի համայնքի ավագանու՝ 18 սեպտեմբերի 2020 թվականի թիվ 101 և 04 հունիսի 2020 թվականի թիվ 65 որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

4. Արենի համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխումներ կատարելուն համաձայնություն տալու մասին

5. Արենի համայնքի ավագանու 17.12.2020 թվականի թիվ 139 որոշման թիվ 1 հավելվածում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

6. Արենի համայնքի Աղավնաձոր և Ելփին բնակավայրերի վարչական տարածքներում գտնվող հողերի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին

7. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ-վաճառքով օտարելուն համաձայնություն տալու մասին

8. Արենի համայնքի ավագանու 15.12.2017 թվականի «ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու 30-ը նոյեմբերի 2014 թվականի թիվ 26-Ն որոշումը ուժը կորցրած

ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Արենի համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 55-Ն որոշման մեջ փոփոխութեուններ և լրացումներ կատարելու մասին

9. Արենի համայնքի ավագանու 26 հունվարի 2018 թվականի թիվ 9 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

10. Արենի համայնքի ղեկավարի 2021 թվականի բյուջեի կատարման առաջին եռամսյակի հաշվետվությունն ի գիտություն ընդունելու մասին

11. 01.01.2021-31.03.2021 թթ. ընկած ժամանակահատվածում Արենի ՀՈԱԿ-ի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունն ի գիտություն ընդունելու մասին

12. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը մրցույթով վարձակալությամբ հատկացնելուն համաձայնություն տալու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 039

### ԱՐԵՆԻ ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՍԵՐՅՈԺԱ ՆԵԼՍՈՆԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 04.06.2020 թվականի թիվ 01/08.1/3602-2020 գրության և ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 03.06.2020 թվականի թիվ 01/15.4/14809-2020 հանձնարարականի պահանջներից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, առաջին մասի 16-րդ կետի պահանջներով և հաշվի առնելով Սերյոժա Սիմոնյանի բարեխիղճ աշխատանքը ժամանակավոր պաշտոնակատար եղած ժամանակահատվածում՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել «Արենի» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնում համայնքի ղեկավարի կողմից առաջարկված Սերյոժա Նելսոնի Սիմոնյանի թեկնածությունը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

16 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 040

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 101 ԵՎ 04 ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 65 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Արենի համայնքի ավագանու՝ 18 սեպտեմբերի 2020 թվականի թիվ 101 որոշման առաջին կետի մեջ «1300» թիվը փոխարինել «1500» թվով:

2. Արենի համայնքի ավագանու՝ 04 հունիսի 2020 թվականի թիվ 65 որոշման 2-րդ կետի մեջ «1200» թիվը փոխարինել «1500» թվով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 041-Ն

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն.

1. Արենի համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի Արենիի այլ ոչ հարկային եկամուտներ 28 բաժնի, 50 խմբի, 00 դասի եկամտատեսակում ավելացնել 1297500 ՀՀ դրամ և նշված գումարը ուղղել.

ա) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին՝ 874 100 ՀՀ դրամ:

բ) Պահուստային ֆոնդ գործառնական դասակարգման 11 բաժնի 01 խմբի 02 դասի 4891 (վարչական բյուջեի պահուստային միջոցներ) հոդվածին՝ 423 400 ՀՀ դրամ,

գ) Պահուստային ֆոնդ գործառնական դասակարգման 11 բաժնի 01 խմբի 02 դասի 4891 (վարչական բյուջեի պահուստային միջոցներ) հոդվածից 423 400 ՀՀ դրամ կատարել հատկացում ֆոնդային բյուջե և ուղղել կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի 5122 (վարչական սարքավորումներ) հոդվածին:

2. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01բաժնի 06 խմբի 01 դասի 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածից պակասեցնել 600000 ՀՀ դրամ և ուղղել կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի 4236 (կենցաղային և հանրային սննդի ծառայություններ) հոդվածին:

3. Կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման 01 բաժնի 01 խմբի 01 դասի 4861 (այլ ծախսեր) հոդվածից պակասեցնել 3000000 ՀՀ դրամ և ուղղել 4851 (Կառավարման մարմինների գործունեության հետևանքով առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում) հոդվածին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 042

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17.12.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 139 ՈՐՈՇՄԱՆ ԹԻՎ 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Տալ համաձայնություն Արենի համայնքի ավագանու 17.12.2020 թվականի «2021 թվականի համար Արենի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ-ների) աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 139 որոշման թիվ 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման թիվ 1 հավելվածում «աշխատակիցների թվաքանակը՝ 32» բառերը և թվերը փոխարինել «աշխատակիցների թվաքանակը՝ 33» բառերով և թվերով:

2. Հավելվածի 27-րդ կետից հետո ավելացնել նոր 28-րդ կետ՝ հետևյալ խմբագրմամբ.

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Բնակավայր | Հաստիքային միավորը | Աշխատակիցների թվաքանակը | Դրույքաչափ | Դրույքաչափ (ամսեկան) |
|---|---|---|---|---|---|---|
| 28 | ՀՈԱԿ-ի բանվոր | Արփի | 0.5 | 1 | 88312 | 44156 |

3. Հավելվածի վերջին տողի «Ընդամենը» բաժինը շարադրել նոր խմբագրությամբ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ընդամենը | **29.5** | **33** | **3285908** | **3424304** |

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 043

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՁՈՐ ԵՎ ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշումը ինչպես նաև քաղաքացիներ Հակոբ Վահրամի Բադալյանի, Սարգիս Գագիկի Ղարիբյանի և Լիլիանա Էդվարդի Դեմիրչյանի դիմումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Արենի համայնքի Ելփին բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել փոփոխություն՝

Ա) Արենի համայնքի Ելփին բնակավայրի բնակիչ Հակոբ Վահրամի Բադալյանի սեփականություն հանդիսացող Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.13709 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի (գործառնական նշանակությունը՝ խաղողի այգի, ծածկագիրը՝ 10-020-0150-0040) նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

Բ) Արենի համայնքի Ելփին բնակավայրի բնակիչ Հակոբ Վահրամի Բադալյանի սեփականություն հանդիսացող Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.12213 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի (գործառնական նշանակությունը՝ խաղողի այգի, ծածկագիրը՝ 10-020-0150-0040) նպատակային նշանակություն̈ը փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

Գ) Արենի համայնքի Ելփին բնակավայրի բնակիչ Սարգիս Գագիկի Ղարիբյանի սեփականություն հանդիսացող Ելփին բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.25039 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի (գործառնական նշանակությունը՝ խաղողի այգի, ծածկագիրը՝ 10-020-0149-0006) նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2. Տալ համաձայնություն Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել փոփոխություն՝ Լիլիանա Էդվարդի Դեմիրչյանին սեփականության իրավունքով պատկանող 23.19665 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիր՝ 10-006-0239-0770, գործառնական նշանակությունը՝ կորիզավոր, խաղող) հողամասից առանձնացված 0.15 հա հողակտորի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայի՝ գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 044

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 3-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Տալ համաձայնություն.

1. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

1.1 0.90722հա (ծածկագիրը՝ 10-008-0184-, գործառնական նշանակությունը՝ այլ ) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 600 %-ից ոչ պակաս՝ 370 000 ՀՀ դրամ,

1.2 1.02553հա (ծածկագիրը՝ 10-008-0184-, գործառնական նշանակությունը՝ այլ) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 600 %-ից ոչ պակաս՝ 420 000 ՀՀ դրամ,

2. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող Չիվա բնակավայրի վարչական տարածքում գտնվող.

2.1 0.11270հա (ծածկագիրը՝ 10-036-0109-, գործառնական նշանակությունը՝ 3-րդ կարգի ջրովի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ից ոչ պակաս՝ 195 000 ՀՀ դրամ,

2.2 0.28714հա (ծածկագիրը՝ 10-036-0109-, գործառնական նշանակությունը՝ 4-րդ կարգի ջրովի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150 %-ից ոչ պակաս՝ 300 000 ՀՀ դրամ,

2.3 0.13613 հա (ծածկագիրը՝ 10-036-0035-0022, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ից ոչ պակաս՝ 460 000 ՀՀ դրամ,

2.4 0.12808 հա (ծածկագիրը՝ 10-036-0035-0023, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ից ոչ պակաս՝ 435 000 ՀՀ դրամ,

2.5 0.12473 հա (ծածկագիրը՝ 10-036-0035-0024, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) բնակավայրերի նշանակության հողամասը աճուրդով օտարել: Մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100 %-ից ոչ պակաս՝ 425 000 ՀՀ դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 045-Ն

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.12.2017 ԹՎԱԿԱՆԻ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30-Ը ՆՈՅԵՄԲԵՐԻ 2014ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 26-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 55-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի երրորդ կետի, 34-րդ հոդվածի առաջին մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Արենի համայնքի ավագանու 15 դեկտեմբերի 2017 թվականի «ՀՀ Վայոց ձոր մարզի Արենի համայնքի ավագանու 30-ը նոյեմբերի 2014 թվականի թիվ 26-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Արենի համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 55-Ն որոշման հավելվածի 19-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ կերպ.

19. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրում, վերջին 6 (վեց) ամսում գրանցված և մշտական բնակություն ունենալու դեպքում, ըստ բնակավայրի վարչական ղեկավարի կողմից տրված տեղեկանքի, յուրաքանչյուր ծնունդի կամ մահվան դեպքում սահմանվում է միանվագ դրամական օգնություն 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով: Նշված վճարումը կատարվում է համապատասխան վկայականի առկայության դեպքում:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 046

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26 ՀՈՒՆՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 9 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հո և 34-րդ հոդվածների պահանջներով ` Արենի համայնքի ավագանին *որոշում է*`

Արենի համայնքի ավագանու 26.01.2018թվականի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 9 որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ.

1. Որոշման 2-րդ, 6-րդ 7-րդ և 9-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ` հետևյալ կերպ.

2) Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ` ծածկագիր 3.1-7, հանձնաժողովի քարտուղար

6) Անուշիկ Ծատուրյան` սոցիալական մանկավարժ, հանձնաժողովի անդամ

7) Անահիտ Տեր-Հովսեփյան` լոգոպեդ, հանձնաժողովի անդամ

9) Էդիկ Սիմոնյան` Արենի համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ`** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 047

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 92-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Արենի համայնքի ղեկավարի բյուջեի կատարման 2021 թվականի առաջին եռամսյակի հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված

Արենի համայնքի ավագանու

16.04.2021թ.-ի թիվ 047 որոշման

2021թ I եռամսյակ

Եկամտային մաս.

հազար դրամ

| Եկամտատեսակ | Նախատեսված /եռամսյակ/ | Կատարողական /եռամսյակ/ | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 1249,0 | 1439,6 | 115,3 |
| Հողի վարձավճար համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 2981,5 | 3277,2 | 109,9 |
| Գույքահարկ | 7021,0 | 10031,4 | 142,9 |
| Տեղական տուրքեր | 421,0 | 1168,5 | 277,6 |
| Գույքի վարձակալությունից եկամուտներ | 270,0 | 350,0 | 129,6 |
| Աղբահանության և խմելու ջրի վճարներ | 1898,0 | 2022,8 | 106,6 |
| Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 83978,6 | 83978,6 | 100,0 |
| Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ | 518,9 | 518,9 | 100,0 |
| Արտադպրոցական դաստիարակություն | 480 | 250,4 | 52,2 |
| Հողի օտարումից մուտքեր | 15000 | 15412,9 | 102,8 |
| Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր | 0 | 4,9 | |
| **Այլ եկամուտներ**/Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, Վարչական գանձումներ, օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/ | 6585 | 7219,0 | 109,6 |
| **Ընդամենը** | **120403,0** | **125674,2** | 104,4 |

| Ծախսային մաս | Նախատեսված /եռամսյակ/ | Կատարողական /եռամսյակ/ | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ | 32500,0 | 27756,2 | 85,4 |
| Էներգետիկ ծառայություններ | 6000,0 | 5978,3 | 99,6 |
| Կապի ծառայություններ | 350,0 | 298,4 | 85,3 |
| Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում | 7952,0 | 3792,1 | 47,7 |
| Դրամաշնորհներ | 21000,0 | 20917,3 | 99,6 |
| Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 2750,0 | 2545,0 | 92,5 |
| Այլ ծախսեր | 1183 | 1171,8 | 99,1 |
| Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում, շինարարություն | 129657,0 | 129657,0 | 100,0 |
| Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ | 10915,0 | 9256,5 | 84,8 |
| **Ընդամենը** | **212307,0** | **201372,6** | **94,8** |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 048

01.01.2021-31.03.2021 ԹԹ. ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԱՐԵՆԻ ՀՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

01.01.2021-31.03.2021 թթ. ընկած ժամանակահատվածում Արենի ՀՈԱԿ-ի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը ընդունել ի գիտություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի՝ կազմված 2 էջից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված
Արենի համայնքի ավագանու
16.04.2021 թվականի թիվ 048 որոշման

<<ԱՐԵՆԻ>> ՀՈԱԿ 2021թ.

*2021թ հունվարի 8-ից մարտի 31-ը կատարված աշխատանքներ*

առ 01.ապրիլ.2021 դրությամբ

| հ/հ | Աշխատավարձ | գումարը |
|---|---|---|
| 1 | Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ | **9 079 800** |
| | **Ընդամենը** | **9 079 800** |
| հ/հ | ***Կատարած աշխատանքները*** | **Գումարը** |
| | **Ագարակաձոր բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի 2021թ կատարված աշխատանքներ** | |
| 1 | 7-րդ փողոցի խմելու ջրագծի վթարի վերանորոգման աշխատանքեր | 35 620,0 |
| 2 | Մանկապարտեզի խաղահրապարակի վերանորոգման աշխատանքներ | 94 500,0 |
| **Ընդամենը** | | **130 120** |
| | **Աղավնաձոր բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի 2021թ կատարված աշխատանքներ** | |
| 1 | Ճանապարհների ձնամաքրման աշխատանքներ `բելառուս և գրեյդեր տեխնիկաներով` 2անգամ | 39 840,0 |
| 2 | ԱԱՊԿ ՊՈԱԿ-ի շենքի կոյուղու բացման աշխատանքներ | 11 150,0 |
| 3 | 1-ին փողոցում ճամփեզրի գրունտի հարթեցման,գերեզմանափոսերի քանդման և աղբավայրի մաքրման աշխատանքներ | 33 840,0 |
| 4 | 3-րդ փողոցի ճանապարհահատվածի հողալցման և հարթեցման աշխատանքներ | 26 980,0 |
| 5 | Մանկապարտեզի պահեստային սենյակի վերանորոգման աշխատանքներ | 91 035,0 |
| 6 | ,,Խանիձոր-Աբանա,, ոռոգման ջրագծի վթարված հատվածի վերանորոգման աշխատանքներ | 74 400,0 |
| 7 | 25-րդ և 26-րդ փողոցների բարեկարգման և համահարթեցման աշխատանքներ | 21 300,0 |
| ***Ընդամենը.*** | | ***298 545*** |
| | **Արենի բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի 2021թ կատարված աշխատանքներ** | |
| 1 | Գերեզմաններ տանող ճանապարհի ձնամաքրման աշխատանքներ | 16 920,0 |
| 2 | ,,Ամաղու,, կոչվող խմելու ջրագծի վերանորոգման աշխատանքեր | 12 690,0 |
| 3 | Ճանապարհների ձնամաքրման աշխատանքներ `բելառուս և գրեյդեր տեխնիկաներով | 26 850,0 |
| 4 | Գերեզմանափոսերի քանդման աշխատանքներ` 6տեղ | 62 130,0 |
| 5 | Աղավնաձոր բնակավայրից աղբամանների տեղափոխում Արենի համայնքի Ագարակաձոր,Աղավնաձոր,Արփի,Արենի, Չիվա, Ռինդ, Ելփին բնակավայրեր | 348 000,0 |
| 6 | Խաչի տակ կոչվող թաղամասում ճանապարհների հարթեցման աշխատանքներ | 322 560,0 |
| 7 | Փողոցների մասնակի հարթեցման աշխատանքներ `գրեյդերով | 32 920,0 |
| 8 | Մշակույթի տան դասասենյակում հատակի վերանորոգման աշխատանքներ | 74 400,0 |
| 9 | Ճանապարհների համահարթեցման և խճապատման աշխատանքներ` էքսկավատոր,գրեյդեր և կամազ ինքնաթափ մեքենաներով | 422 980,0 |
| 10 | ,,Ղեր,, կոչվող հանդամասում սեպտիկ հորի քանդման աշխատանք | 14 400,0 |
| **Ընդամենը** | | ***1 333 850*** |
| | **Ելփին բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի 2021թ կատարված աշխատանքներ** | |
| 1 | Ազդարարման համակարգի տեղադրման աշխատանքներ | 42 650,0 |
| 2 | Ճանապարհների ձնամաքրման աշխատանքներ `բելառուս և գրեյդեր տեխնիկաներով | 52 830,0 |

| | | |
|---|---|---|
| 3 | 13-րդ փողոցի գետի մեջ ընկած քարի մանրացման և գետից հեռացման աշխատանքներ | 19 950,0 |
| 4 | Կոյուղագծի մաքրման աշխատանքներ | 14 520,0 |
| 5 | Աղբավայրի մաքրման աշխատանքներ | 21 220,0 |
| 6 | ,,Ռազի,, առվի խողովակաշարի վրա էլեկտրաեռակցման աշխատանքներ | 10 500,0 |
| 7 | Աղբավայրի փակման և նոր աղբավայրի բացման աշխատանքներ | 35 260,0 |
| *Ընդամենը* | | ***196 930*** |
| | **Խաչիկ բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի 2021թ կատարված աշխատանքներ** | |
| 1 | Ազդարարման համակարգի տեղադրման աշխատանքներ | 26 500,0 |
| 2 | Ճանապարհների ձնամաքրման աշխատանքներ `բելառուս տրակտորով `5անգամ | 89 660,0 |
| 3 | ,,Սպիտակ աղբյուր,, տանող ճանապարհի համահարթեցման աշխատանքներ | 151 678,0 |
| 4 | Եղեգնաձոր քաղաքից 5տ սերմի տեղափոխում | 55 705,0 |
| *Ընդամենը* | | ***323 543*** |
| | **Չիվա բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի 2021թ կատարված աշխատանքներ** | |
| 1 | 1-ին փողոցի խցանված կոյուղագծի բացման աշխատանքներ | 3 400,0 |
| 2 | Ճանապարհների ձնամաքրման աշխատանքներ `բելառուս և գրեյդեր տեխնիկաներով | 5 630,0 |
| 3 | ,,Վերին Քյարիզ,, և ,,Ռինդ-Չիվա,, կոչվող խմելու ջրագծերի վերանորոգման աշխատանքներ | 3 320,0 |
| *Ընդամենը* | | **12 350** |
| | **Արփի բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի 2021թ կատարված աշխատանքներ** | |
| 1 | ,,Գետափի թաղ,, կոչվող թաղամասում խմելու ջրագծի կարգավորիչ սողնակի փոխարինում նորով | 15 000,0 |
| 2 | Ճանապարհների ձնամաքրման աշխատանքներ `բելառուս և գրեյդեր տեխնիկաներով | 9 960,0 |
| 3 | Գերեզմանափոսի քանդման աշխատանք | 10 860,0 |
| 4 | 6-րդ փողոցում 95գծմ վթարային հատվածի խմելու ջրագծի վերանորոգման աշխատանքներ | 109 040,0 |
| 5 | 7-րդ փողոցի 1-ին փակուղու խաչմերուկում խմելու ջրագծի վթարի վերանորոգման աշխատանքներ | 25 897,0 |
| 6 | Մանկապարտեզի սննդի սենյակի վերանորոգման աշխատանքներ | 119 686,0 |
| 7 | Ներհամայնքային ճանապարհների մաքրման և համահարթեցման աշխատանքներ | 492 684,0 |
| *Ընդամենը* | | **783 127** |
| | **Գնիշիկ բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի 2021թ կատարված աշխատանքներ** | |
| *Ընդամենը* | | ***0,0*** |
| | **Ռինդ բնակավայր Արենի ՀՈԱԿ-ի 2021թ կատարված աշխատանքներ** | |
| 1 | Գերեզմանոցում գերեզմանափոսերի փորման աշխատանքներ` 4տեղ | 53 840,0 |
| 2 | Ազդարարման համակարգի տեղադրման աշխատանքներ | 40 450,0 |
| 3 | Ճանապարհների ձնամաքրման աշխատանքներ` բելառուս և գրեյդեր տեխնիկաներով | 15 590,0 |
| **Ընդամենը** | | **109 880** |
| **Ընդամենը կատ աշխատանքներ** | | **3 188 345** |
| ***Ընդամենը (աշխատավարձ + կատարված աշխատանքներ)*** | | ***12 268 145*** |

**Աշխատակազմի քարտուղար** **Գ.Սիմոնյան**

«ԱՐԵՆԻ» ՀՈԱԿ 08914384

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2021թվականի N 049

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի պահանջով ՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Տալ համաձայնություն

1. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.70263 հա (ծածկագիրը՝ 10-036-0109-0273, գործառնական նշանակությունը 4-րդ կարգի ջրովի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցույթով, 25 տարի ժամկետով վարձակալությամբ հատկացնելուն: Մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս 10 000 ՀՀ դրամ,

2. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.28762 հա (ծածկագիրը՝ 10-036-0109-0274, գործառնական նշանակությունը 4-րդ կարգի ջրովի վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցույթով, 25 տարի ժամկետով վարձակալությամբ հատկացնելուն: Մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս 4 000 ՀՀ դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**